«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական

աշխատանք

Թեմա՝ Համագործակցային ուսուցման մեթոդներ

Առարկա՝ մաթեմատիկա

Ուսուցիչ՝ Մնացականյան Անահիտ

Դպրոց՝ Արմավիրի մարզի Փշատավանի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Քրիստինե Պետրոսյան

2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն----------3

2. Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան----------4

3. Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները----------8

4. Համագործակցային ուսուցման մեթոդները----------11

5. Եզրակացություն----------15

6. Օգտագործված գրականության ցանկ----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացված ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում և երկարատև պատմությունը, այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության վկայությունների բացակայությունը չէ: Իրականում, համագործակցային ուսուցումը ժամանակակիրց կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերող հետազոտությունների արձագանքները բավական խոստումնալից են: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: Համագործակցային ուսուցման կիրառումը սովորելը ժամանակատար գործընթաց է: Հայաստանի դպրոցներն ի տաբերություն այլ երկրների դպրոցների ավելի շատ հիշեցնում են ուսուցիչների և սովորողների ավանդական համայնքներ: Ուստի համագործակցային ուսուցումը Հայաստանում ունի ներդրման ու զարգացման համար անհրաժեշտ հիմք և բարենպաստ պայմաններ:

Մեր երկրի կարևոր հարստություններից մեկը գիտական ներուժն է, որի ձևավորման պատասխանատվությունը կրում է նաև հանրակրթությունը: Հասարակական բոլոր

փոփոխությունները ազդում են նաև կրթական համակարգի վրա: Հետանկախացման տարիներին ՀՀ հանրակրթության մեջ իրականացվում են
կրթական բարեփոխումներ, որոնք անդրադառնում են կրթության կազմակերպման տարբեր հարցերի: Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ բարեփոխումների պահանջով առաջադրված համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետության ուղիների մատնանշմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակը՝ բացահայտել համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետությունը ուսուցման գործընթացում:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան

Հետազոտության նպատակներն են հստակորեն սահմանել համագործակցային ուսուցման տեխնոլոգիան, համագործակցային կարողությունների զարգացման մեթոդները, անցկացման կանոնները, իրականացման փուլերն ու կիրառման առանձնահատկությունները դպրոցական դասընթացում: Մեր ուսումնասիրության խնդիրն է բացահայտել համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի էությունը, համագործակցային սկզբունքներով իրականացվող մեթոդների առավելությունները, սահմանափակումները, մեթոդների կիրառման ժամանակ դրսևորվող մանկավարժական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է սովորողների ակտիվ գործունեություն՝ խմբային հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցում: Այս պայմաններում սովորողն իր պահանջմունքներով, հետաքրքրություններով դառնում է ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից, որն ունակ է գիտակցելու ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների, անձնային որակների, արժեքային կողմնորոշիչների նշանակությունը, սոցիալական հմտությունների կարևորությունը արդի աշխարհում, գիտելիքների ձեռքբերման, ամրապնդման, իրական կյանքում դրանց կիրառման, սոցիալական և ինքնաճանաչման հմտությունների զարգացման գործում համագործակցային ու խմբային աշխատանքի հմտությունների կարևորությունը՝ որպես հասարակության մեջ անհատի ինքնադրսևորման ապահովման միջոց: «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ

փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան 20-րդ դարի 80-ական թվականներից սկսեց լայն տարածում գտնել: Այս տեխնոլոգիայի ծագման , զարգացման հիմքում ինովացիոն գործընթացներ են, որոնք դիտարկել են մի շարք նորարար- մանկավարժներ՝ Կ.Դ. Ուշինսկին, Ն.Պ. Պիրոգովը, Լ.Ն. Տոլստոյը, Ս.Տ. Շացկին, , Յա. Կորչակը, Կ. Ռոջերսը, Հ. Հինդիլյանը, Ս. Մանդինյանը և այլոք:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան, ըստ կիրառման եղանակի, ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիա է, որի հիմքում մարդասիրական մանկավարժության դրույթներն են:

Այդ պատճառով էլ այս տեխնոլոգիան ունի կիրառման լայն շրջանակ՝

- կրթական բոլոր աստիճաններում ՝ սկսած նախադպրոցական կրթությունից մինչև ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացները,
- գրեթե բոլոր ուսումնական առարկաների դասաժամերին ՝ մայրենի և օտար լեզուներ, տեխնոլոգիա, ինֆորմատիկա, կերպարվեստ, մաթեմատիկա և այլն,
- այն նաև դաստիարակության տեխնոլոգիա է , հաջողությամբ կիրառվում է արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներում, դպրոց- ընտանիք փոխգործակցության համատեքստում:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝ սոցիալական փոխկախվածության, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության:

Սոցիալական փոխկախվածության տեսության նրկայացուցիչները (Կուրտ Կաֆկա, Կուրտ Լեվին) խումբը դիտում են որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը. խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության: Իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը:

Ճանաչողական զարգացման տեսությունն իր հիմքում ներառում է Պիաժեի, Վիգոտսկու, Բրունների հայացքները: Վիգոտսկին ասում էր՝ գիտելիքին հատուկ է

սոցիալական որոշակի բնութագիր, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է: Իսկ Ջերոմ Բրունները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե *ինչ* սովորելու, այլ *ինչպես* սովորելու սկզբունքի վրա:

Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը որոշակի դրդապատճառ կամ շարժառիթ (մոտիվացիա) է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքիները մշակեց

ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի: Պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի հարցերի՝ աշակերտները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:

Խմբում սոցիալական փոխկապվածության գաղափարը ամբողջացրին ամերիկացի Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին «Սոցիալական փոխկախվածության» տեսությունը՝ նշելով սոցիալական փոխկախվածության ազդեցությունը սովորողների նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման վրա՝ միջանկյալ փոփոխությունների միջոցով:Ներկայումս համագործակցային ուսուցումը լայն տարածում ունի սկանդինավյան երկրներում և ԱՄՆ-ում:

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:
4. Սոցիալական հմտություններ. Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:
5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

Աղբյուր՝ D. Johnson, R. Johnson, E. Holubec, 1994, էջ 4:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:
-

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: «Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ»,- գրված է Թալմուդում: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի

Ուսուցման մեթոդները մնակավարժի և սովորողի համատեղ աշխատանքն են ուսումնական գործունեություն կազմակերպելու նպատակով: Մեթոդն այն մեխանիզմն է, որն ապահովում է դասավանդողի և սովորողի մանկավարժորեն որոշակի նպատակադրում ունեցող փոխկապակցված գործունեությունը:

Ուսումնական գործընթացում կիրառվում են բազմաթիվ մեթոդներ: Մենք մասնավորապես անդրադառնալու ենք այն մեթոդներին, որոնցում առկա է սովորողների դերը, որոնք աշակերտներին դարձնում են գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացի մասնակիցը: Այդ մեթոդների թվին է պատկանում համագործակցային ուսուցումը: Այն սովորելու անհատական ոճերի, սովորողի ինքնուրույնության և շարժառիթների իրականացման լավագույն ձևն է: Միասին աշխատելով աշակերտները կարող են համատեղ նպատակների հասնել:

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակներն են՝

1. **Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր**
2. **Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր**
3. **Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր**

1.Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ: Խմբում ընդգրկված անդամները առաջադրանքի կատարման համար աշխատում են մեկ դասաժամի կամ մի քանի դասաժամի ընթացքում: Յուրաքանչյուր աշակերտ իր առջև ունի պարտականություն. Խմբի յուրաքանչյուր անդամի ուսուցման արդյունավետությունը հասցնել առավելագույնի: Ամեն մի առաջադրանք պետք է ունենա նպատակ: Նախքան ուսուցման գործընթացին անցնելը որոշվում է, թե խումբը քանի աշակերտ է ընդգրկում: Աշակերտները պետք է

համագործակցեն միմյանց հետ, աջակցեն մեկը մյուսին: Համագործակցային ուսուցման խմբերը փոքր են՝ երկուսից չորս անդամ: Խմբերը ձևավորվում են ըստ պատահական ընտրության սկզբունքով: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝

1. խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
2. պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
3. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

2.Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտագործվող նյութերը նախապատրաստելու համար: խմբում ընդգրկված անդամները միասին աշխատում են մեկ քննարկման կամ մեկ դասաժամի ընթացքում: Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը հաճախ այնպես են ձևավորվում, որ կարողանում են արագորեն մասնակցել երեքից հինգ րոպե տևողությամբ քննարկումներին: Ուսուցիչը պետք է կազմակերպի ներածական քննարկումներ, խմբային քննարկումներ և ամփոփի այդ քննարկումները: Ուսուցման ընթացքում ուսուցչի մոտ դժվարություն է առաջանում աշակերտների կողմից նյութի ճիշտ մատուցումը, բացատրությունը: Այս դժվարությունները հաղթահարելու համար ուսուցիչը կարող է հանդես գալ ուղղորդողի դերում, որն էլ բարենպաստ է անդրադառնում արդեն նախապատրաստված ընթացի վրա:

3.Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր

Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում: Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:

Այս խմբերը գործում են առնվազն մեկ կիսամյակի ընթացքում: Այն ներառում է բացակա ընկերներին աջակցելը, օգնել անցած նյութի յուրացման հարցում: Այս խմբերը երկարաժամկետ են և ապահովում են երկարատև, հոգատար փոխհարաբերություններ: Խմբերը անցկացնում են պաշտոնական հանդիպումներ, կատարում են քննարկումներ որոշում խմբի անդամի առաջադիմության չափը: Հենակետային խմբերն ունեն անձնական պաասխանատվություն՝ լսել և սատարել խմբի անդամներին: Որքան մեծ է դպրոցը և դասարանը այնքան ավելի կարևոր է հենակետային խմբեր ունենալն: Սովորաբար հենակետային համագործակցային խմբերը ուսուցչի կողմից ձևավորվում են նախապես խմբի անդամներին ուսումնասիրելուց հետո:

Տարրական դպրոցում ֆորմալ, ոչ ֆորմալ և հենակետային խմբերի ձևավորումն ընդունելի է: Ուսուցիչն ինքն է որոշում, թե տվյալ թեմայի շրջանակներում ինչպիսի խմբեր կարելի է ձևավորել՝ կարևորելով ուսումնական նյութի առանձնահատկությունները, նպատակները, սովորողների հետաքրքրությունների սահմանները, նրանց զարգացվածության աստիճանը, խմբում աշխատելու ցանկությունը և այլն:

Խմբում յուրաքանչյուր աշակերտի տրվում է որևէ դեր՝ առաջնորդ, ընդդիմախոս, նյութերի վերլուծաբան, փորձագետ, դիտորդ, կազմակերպիչ, օգնական, ժամանակը պահող և այլն: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է կրտսեր դպրոցականների մտածողության զարգացմանը, նրանք սովորում են լսել, ընկալել և վերլուծել ուսումնական նյութը, ինքնուրույն որոշումներ կայացնել, ձևավորում է ինքնագնահատական, համագործակցություն, փոխօգնություն, կոնֆլիկտների, խնդիրների, համատեղ լուծման կարողություններ:

Համագործակցային ուսուցման մեթոդները

Համագործակցային ուսուցումը, որը հիմնված է սովորողների համատեղ գործունեության հիման վրա, բնորոշվում է որպես խմբային աշխատանքի առավել բարձր աստիճան, որը հնարավորություններ է ընձեռում ուսումնական բազմաբնույթ նպատակներին հասնելու համար: Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա SS ոլորտում որոշ գիտելիքներ. ուսման այս մեթոդի նպատակներից է նաև նշված կարողությունների զարգացումը: Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցված խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողականություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողականությունները:

Այս մեթոդի կիրառման հիմնական քայլերն են՝

ա) առաջադրանքի սահմանումը,

բ) տեղեկությունների որոնման տարատեսակ ռազմավարությունները,

գ) տվյալներ և տեղեկություններ ստանալու մատչելիությունը (որտեղ),

դ) տեղեկությունների օգտագործումը և խնդիրների լուծումը,

ե) սինթեզը,

զ) գնահատումը:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ,որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ:Համագործակցային ուսուցման մեթոդներն են՝

1.Աշակերտների թիմային առաջադիմություն

2. Խճանկար

3.Շրջագայություն պատկերասրահում

4 Երեք բանալի և մեկ կողպեք,

5.Հինգրոպեանոց ազատ շարադրանք

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինը: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը խթան է հանդիսանում ցածր առաջադիմություն ունեցող երեխաների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունավետության բարձրացման գործում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն ընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդը կիրառելիս գնահատվում է , թե՛ առանձին աշակերտը և թե՛ խումբը:

Խճանկար (Ջիգսո,Jigsaw):Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Օրինակ՝ աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբի տալ դասի մեկ հատված և որոշակի ժամանակ: Ձևավորվում են փորձագիտական խմբերը:Փորձագիտական խմբերում տրված հատվածը յուրացնելուց հետ աշակերտները վերադառնում են հենակետային խմբերը: Յուրաքանչյուր փորձագետ սովորեցնում է իր թեման խմբի անդամներին: Արդյունքում նյութը յուրացնում են բոլոր աշակերտները:

Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում: Սա <<Խճանկար>> մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացմել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր դպրոցականների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

Խմբային հետազոտության մեթոդ: Խմբային հետազոտության մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները աշխատում են խմբերով մեկ թեմայի շուրջ: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխոգնության վրա: Խմբային հետազոտության մեթոդի հեղինակը պրոֆեսոր Շարոնն է, սակայն այս մեթոդի ակունքները հանդիպում են Ջոն Դյուիի տեսության մեջ: Այս մեթոդը կիրառելիս աշակերտները սովորում են համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրը: Աշակերտները խորությամբ են յուրացնում տրված նյութի բովանդակությունը և սովորում են համագործակցել հետազոտելու ընթացքում:Այսպիսով աշակերտները յուրացնում են բովանդակությունը, զարգանում է համագործակցային աշխատանքի հմտությունները:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

Հինգ բոպեանոց ազատ շարադրանք: Հինգ բոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ բոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում.
- սովորողների խմբերի ձևավորում.
- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում.

գնահատում:

Այսպիսով՝ համագործակցային աշխատանքը ձևավորում է դրական դիրքորոշում, նպաստում ուսումնառության նկատմամբ սովորողների տեսակետների, մոտեցումների ու արժեքների բարելավմանը: Համագործակցային դասի ստեղծումը ներառում է նախապատրաստական հետևյալ աշխատանքները՝ ուսումնական նյութի մանրամասն մշակում, գլխավոր գաղափարների ընդգծում, ուսուցման արդյունքների սահմանում, ուսումնական տարրերի բովանդակության, ծավալի, հաջորդականության և մեթոդների որոշում, լրացուցիչ նյութերի, առաջադրանքների և թեստերի մշակում, ուսուցանվող նյութի յուրացման ուղեցույց, որում պիտի լինեն գիտելիքների յուրացման չափանիշեր, ինքնաստուգման սանդղակներ, հրահանգներ:

Եզրակացություն

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

Ջեյմս Ուայթսոն

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ: Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ: Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

Դասալսումների ժամանակ ուսուցիչների կողմից կիրառվում են բազում մեթոդներ, սակայն դրանք գրեթե միշտ կա՛մ չեն հասնում տրամաբանական ավարտին՝ դասի նպատակին, կա՛մ էլ ժամանակի մեջ չեն տեղավորվում, խմբերը համասեռ չեն կազմվում, խմբերում թիմային աշխատանքը չի ստացվում, ոչ բոլորն են ակտիվություն ցուցաբերում, անհրաժեշտ պահանջները կա՛մ չեն հասկանում, կա՛մ էլ թերի են կատարում: Ցանկացած նոր աշխատանք կատարելիս կարող են բացահայտվել բազում թերություններ, որոնք շտկվում, ճշգրտվում են աշխատանքի բազմակի կրկնության արդյունքում:

Համագործակցային ուսուցումը նպաստում է.

- անձի զարգացմանը և անհատականության ձևավորմանը,
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովմանը,
- սթրեսի հաղթահարմանը,
- առողջ փոխհարաբերությունների դրսևորմանը

Համագործակցային ուսուցման տարրերն են.

- դրական փոխկախվածության ապահովում,
- դեմ առ դեմ փոխազդեցություն,
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,
- խմբային գործընթացի մշակում,
- փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանքի կատարում:

Մանկավարժական տեխնոլոգիաների, համագործակցային մեթոդների նկարագրությունները նպատակ չունեն առաջարկելու ուսուցման կազմակերպման հստակ դեղատոմսեր, բայց կարող են նախանշել դասավանդման արդյունավետության ապահովման բնութագրիչները: Կրթական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ուսուցումը որքանով է ուղղորդված դեպի սովորողները և հասարակությունը, ինչպես են մատուցվում, գնահատվում սովորողների գիտելիքները, նրանց կարողությունները և հմտությունները:

Համագածակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում են հենց աշակերտների միջոցով:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողների (համագործակցային հմտություններ կիրառողներ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ կիրառողներ) ձևավորելը: Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ինքնաճանաչման և ինքնուղղորդման հմտությունների կիրառումը):

Գրականություն

1. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., Կրթական մշակման և ինտեգրման մոտեցումներ, ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004:

2. Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006:

3. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, 2006:

4. Վեսա Պուրուկուրու, Համագործակցային ուսուցում. Վերապատրաստողի ուղեցույց, Երևան, 2006:

5. https://multiurok.ru/all-goto/?url=http://gspi.am/media/journal/2014n1b/37.pdf

6.https://en.wikipedia.org/wiki/Cooperative_learnin